

«2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ 8-ՐԴ ՇՐՋԱՆԻ

V ՓՈՒԼ

«2017թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի 8-րդ շրջանի հինգերորդ փուլին ներկայացվում է հինգ հարցից բաղկացած մեկ հարցաշար, մեկ խնդիր, առաջադրանքներ՝ «Հակասություններ և բացահայտումներ» ու «Գրագիտություն և իրազեկվածություն» թեմաներից, ինչպես նաև հոգեմտածողության վերաբերող առաջադրանքից:

Հարցաշարի ճիշտ պատասխանները կգնահատվեն յուրաքանչյուրը 2 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Խնդիրը բաղկացած է երկու հարցից: Առաջին հարցի ճիշտ պատասխանը կգնահատվի 10 միավոր, 2-րդ հարցի ճիշտ պատասխանը՝ 7 միավոր: Երկու դեպքում էլ սխալ պատասխանը կգնահատվի 0 միավոր: Խնդրի առավելագույն միավորների թիվը կազմում է 17 միավոր:

Հակասությունների բացահայտման առաջադրանքի ճիշտ պատասխանները կգնահատվեն 10 միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր:

«Գրագիտությունի և իրազեկվածություն» խորագրի ներքո պահանջվում է պատասխանել աշխարհում գոյություն ունեցող պետական կառավարման կարգերի, Հայաստանի բարձրագույն իշխանությունների, տեղական իշխանությունների և նրանց գործունեությանը վերաբերող հարցերին: Հարցերը մատչելի են ու հեշտ, ուստի այս անգամ գնահատման կարգը կլինի յուրաքանչյուր ճիշտ պատասխան կգնահատվի 1 միավոր, իսկ սխալ պատասխանի դեպքում նախորդ շրջափուլերից ձեռք բերած միավորներից կհանվի 1 միավոր: Առավելագույն միավորը կլինի (+ 13), նվազագույն միավորը (-13):

Հոգեմտածողությանը վերաբերող առաջադրանքի ճիշտ պատասխանը կգնահատվի 5 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հինգերորդ փուլին ներկայացված առաջադրանքների ընդհանուր միավորների առավելագույն թիվը գերազանցում է 55 միավորը:

Հինգերորդ փուլին ներկայացված առաջադրանքներից և I-V փուլերի հաշվով առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Հինգերորդ փուլին ներկայացված առաջադրանքների պատասխաններն ուղարկել press@gortsq.am էլեկտրոնային հասցեին մինչև 2017թ. նոյեմբերի 25-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն www.gortsq.am կայքէջում՝ 2017թ. նոյեմբերի 26-ին:

ՌԻՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ – Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, HR-ի միջազգային խորհրդանիշով ոսկեպատ շքանշանը, հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2018 թվականի փետրվարին՝ Ծաղկածորում:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

1. Գործադիր մարմնի ղեկավարը հիմնադրի որոշմամբ պետք է ազատվի աշխատանքից: Հիմնադիրը քանի օր առաջ պետք է ծանուցի տնօրենին՝ նրան աշխատանքից ազատելու մասին (պատասխանը տրվում է առանց ընտրելու հնարավորության: Որոշել ինքնուրույն):

Պատասխան – հիմնադիրը կարող է ցանկացած ժամանակ գործադիր մարմնի ղեկավարին ազատել աշխատանքից:

2. Գործատուն՝

ա) վարձու աշխատող է.

բ) վարձու աշխատող չէ, քանի որ հնարավոր է, որ նա լինի կազմակերպության սեփականատերը.

գ) «ա» և «բ» պատասխանները սխալ են:

3. Ի՞նչ տարբերություն աշխատողների ընդհանուր ժողովի (համաժողովի) և մասնակիցների ընդհանուր ժողովի միջև (պատասխանը տրվում է առանց ընտրելու հնարավորության: Որոշել ինքնուրույն):

Պատասխան՝

Աշխատողների ընդհանուր ժողովը քննարկում և լուծումներ է առաջարկում աշխատանքային հարաբերություններին վերաբերող հարցերին, իսկ մասնակիցների ընդհանուր ժողովը՝ կանոնադրության, կազմակերպության կառավարման, կազմակերպչական տեսակին, մասնակցության, ՀՀ օրենսդրությամբ և կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերջնական լուծման վերաբերյալ:

4. Փորձաշրջանի անբավարար արդյունք կարո՞ղ է համարվել նոր ընդունվող աշխատողի և կոլեկտիվի միջև միջանձնային հարաբերությունների վատ դրսևորումները՝

ա) այո, կարող է համարվել.

բ) ոչ, չի կարող համարվել, քանի որ փորձաշրջան սահմանելով ստուգվում է տվյալ աշխատատեղում աշխատողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը.

գ) այո կարող է համարվել, եթե այն համապատասխանում է կոլեկտիվի ընդհանուր աշխատողների թվաքանակի 50 տոկոս և ավելիի ցանկությամբ:

5. Կողմերի միջև ստորագրված (կնքված) համաձայնագրով փոփոխություն է կատարվել աշխատանքային պայմանագրում՝ աշխատավարձի չափը 100 000 դրամից դարձել է 200 000 դրամ: Հետագայում անհրաժեշտություն է առաջացել վերադառնալ աշխատավարձի հին չափին: Ո՞ր փաստաթղթում պետք է կատարել փոփոխությունը՝ աշխատանքային պայմանագրում, թե նախկինում ընդունված համաձայնագրում՝

ա) համաձայնագրում.

բ) աշխատանքային պայմանագրում.

գ) ոչ մի տեղ էլ պետք չէ փոփոխություն կատարել: Հրամանը բավարար է փոփոխությունը կատարելու համար:

«2017Թ.ՍԱՐԴԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐՈՎԱՆ V ՓՈՒԼԻ

ԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Աշխատողներին աշխատանքի վայր տեղափոխող ավտոբուսի վարորդ Սահակյանը դիտավորյալ, խնայողության նպատակով, ավտոբուսի ընթացքի մեջ գտնվելու ժամանակ անջատել է շարժչի աշխատանքը, որի արդյունքում, գործատուին պատկանող մեքենան վթարի է ենթարկվել, իսկ վարորդը ստացել է խեղում: Գործատու որոշմամբ պատճառված վնասը կազմել է 150 000 դրամ:

Գործատուն հանձնարարել է գլխավոր հաշվապահին վարորդի աշխատավարձից կատարել միանվագ զանձում, պատճառած նյութական վնասի փոխհատուցման համար: Վարորդի ամսական միջին աշխատավարձը կազմում է 150 000 դրամ:

Աշխատողը հրաժարվում է վճարումներ կատարելուց՝ պատճառաբանելով, որ՝ հերիք չէ, որ իրեն փոխահատուցում չի տրվում խեղում ստանալու համար, դեռ մի բան էլ գործատուն է պահանջում վնասի փոխհատուցում: Նա այդ պատճառաբանությունը հիմնավորում է հետևյալ կերպ.

ա) իր հետ չի կնքվել լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր: Քանի որ մեքենա վարելը լի է օբյեկտիվ ռիսկերով, հետևաբար չի պատրաստվում փոխհատուցում վճարել.

բ) պատճառված վնասի չափը չի համապատասխանում իրական վնասի չափին և համարում է, որ գործատուի կողմից գնահատված վնասի չափը սուբյեկտիվ է:

Գործատուն պնդում է, որ իր կողմից կատարած գործողությունները իրավաչափ են և օբյեկտիվ:

Աշխատողը դիմել է դատարան:

Դուք եք դատավորը՝ ինչ որոշում կկայացնեք:

Պատասխան

Դատավորը որոշում կայացնելիս, պետք է առաջնորդվի ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված իրավունքներից: ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ նյութական պատասխանատվություն առաջանում է հետևյալ բոլոր պայմանների առկայության դեպքում՝ 1) պատճառված է վնաս, 2) վնասը պատճառվել է անօրինական գործունեության հետևանքով, 3) առկա է պատճառական կապ անօրինական գործունեության և վնասի առաջացման միջև, 4) առկա է խախտողի մեղքը, 5) խախտում թույլ տված և տուժած կողմերն իրավունքների խախտման պահին եղել են աշխատանքային հարաբերությունների մեջ և 6) վնասի առաջացումը կապված է աշխատանքային գործունեության հետ:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 238-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, բացառությամբ սույն օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած նյութական վնասը, որն առաջացել է գործատուի գույքը փչացնելու կամ կորցնելու հետևանքով.

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 239-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, եթե՝ 1) վնասը պատճառվել է դիտավորությամբ, 2) վնասը պատճառվել է աշխատողի հանցավոր գործունեության հետևանքով. 3) աշխատողի հետ կնքվել էր լիակատար նյութական պատասխանատվության

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 213-րդ հոդվածի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ գործատուին ունեցած աշխատողի պարտքերը մարելու համար աշխատավարձից պահվում կամ գանձվում են՝ աշխատողի մեղքով գործատուին պատճառված վնասի հատուցման գումարը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 214-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավարձը վճարելիս պահումների և գանձումների ընդհանուր չափը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով, որը չի կարող գերազանցել աշխատողի մեկ ամսվա աշխատավարձի հիսուն տոկոսը:

Քանի որ աշխատողի կողմից վնասը պատճառվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 232-րդ և 239-րդ հոդվածների հատկանիշներով, հետևաբար աշխատողը պետք է փոխհատուցի գործատուին պատճառված վնասն ամբողջությամբ:

Վնասի փոխհատուցման ամսական չափը կազմում է 50 000 ՀՀ դրամ:

«2017Թ.ՍԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱՎԱՆ V ՓՈՒԼ

«ՀԱՎԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄ»

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ լայնամասշտաբ փոփոխություններ պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսգրքում: Ձեր առաջարկությամբ օգնեք ՀՀ կառավարության լիազոր մարմնին ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածում կատարել բովանդակային բնույթի փոփոխություններ:

Պատասխան -

Օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ՝ «կոլեկտիվ պայմանագրով կարող է նախատեսվել ծանուցման ավելի երկար ժամկետ» նախադասության մեջ՝ «երկար» բառը պետք է փոխարինել «այլ» բառով:

Փոփոխություն կատարելու առաջարկության նպատակն է վերացնել կոլեկտիվ բանակցության ազատությունը սահմանափակող, կոլեկտիվ պայմանագրի կողմերի իրավունքների հավասարակշռությունը խախտող արտահայտությունը: Ըստ գործող դրույթի աշխատողների ներկայացուցիչները զրկված են կոլեկտիվ բանակցությունների ժամանակ քննարկելու աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցումը Օրենսգրքով նախատեսված 30 օրյա ժամկետից ավելի կարճ ժամկետում ներկայացնելու իրավունքից: Ստացվում է այնպես, որ քննարկվող մասի առկա շարադրությամբ կոլեկտիվ պայմանագրով աշխատողի համար ստեղծվում են ավելի վատթար պայմաններ: «երկար» բառը «այլ» բառով փոխարինելու դեպքում կողմերը կոլեկտիվ բանակցությունների ընթացքում կաշկանդված չեն լինի օրենսգրքի իմպերատիվ դրույթով և կոլեկտիվ պայմանագրում կնախատեսեն միմյանց համար առավել ընդունելի պայմաններ:

«2017Թ.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼ

«ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ»

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՎ

Մարդկային ռեսուրսների կառավարիչները պետք է լիարժեք պատկերացումներ ունենան պետական կառավարման կարգի, Հայաստանի բարձրագույն իշխանությունների, տեղական իշխանությունների և նրանց նրանց գործունեության մասին: Այս բաժնում հարցերի միջոցով կպարզենք մրցույթի մասնակիցների գրագիտությունն ու իրազեկվածությունը՝ ներքոհիշյալ ոլորտներից: Այսպես՝

1. Բերել պետությունների մեկական օրինակներ, որտեղ պետական կարգը՝

ՈՒԺԵՂ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՆ ԵՆ

-  Աֆղանստան
-  Անգոլա
-  Արգենտինա
-  Բենին
-  Բուլղարիա
-  Բրազիլիա
-  Բուրունդի
-  Չինի
-  Կոլումբիա
-  Կոմորյան կղզիներ
-  Կոնգոի Հանրապետություն
-  Կոստա-Ռիկա
-  Կիպրոս
-  Դոմինիկյան Հանրապետություն
-  Էկվադոր
-  Մավադոր
-  Գամբիա
-  Գանա
-  Գվատեմալա
-  Հոնդուրաս
-  Ինդոնեզիա
-  Իրան

-  Քենիա

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-  Լիբերիա
-  Մալավի
-  Մալդիվներ
-  Մեքսիկա
-  Նիկարագուա
-  Նիգերիա
-  Պալաու
-  Պանամա
-  Պարագվայ
-  Ֆիլիպիններ
-  Սան Մարինո
-  Մեյձեյան կղզիներ
-  Սիերա Լիոնե
-  Հարավային Սուդան
-  Սուդան
-  Սուրինամ
-  ԱՄՆ
-  Ուրուգվայ
-  Վենեսուելա
-  Զամբիա

ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

-  Հայաստան
-  Ադրբեջան
-  Բելոռուս
-  ԿԱՀ
-  Կամերուն
-  Չադ
-  Կորեայի Հանրապետություն
-  Կոտ դ Իվուար
-  Գվինեա
-  Հասարակածային Գվինեա

-  Գարն
-  Ղազախստան
-  Մոզամբիկ
-  Նամիբիա
-  Պերու
-  Ռուանդա
-  Շրի Լանկա
-  Տանզանիա
-  Տոգո
-  Ուզանդա
-  Ուզբեկստան
-  Եմեն

ԽԱՌԸ ՏԻՊԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-  Ալժիր
-  Բուրկինա Ֆասո
-  Հորվաթիա
-  Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն
-  Ջիբուտի
-  Եգիպտոս
-  Ֆրանսիա
-  Վրաստան
-  Գվինեա Բիսաու
-  Գայանա
-  Հաիթի
-  Ղրղզստան
-  Մադագասկար
-  Մոնղոլիա
-  Մավրիտանիա
-  Նիգեր
-  Պակիստան
-  Պաղեստինի Հանրապետություն
-  Պորտուգալիա
-  ՌԴ
-  Ռումինիա

-  Սան Թոմե և Պրինսիպի
-  Մենեգալ
-  Սիբիա
-  Սլովենիա
-  Չինաստանի Հանրապետություն
-  Տաջիկստան
-  Ուկրաինա
-  Զիմբաբվե


ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-  Ալբանիա
-  Ավստրիա
-  Բանգլադեշ
-  Բոսնիա և Հերցեգովինա
-  Բուլղարիա
-  Կաբո Վերդե
-  Չեխիա
-  Դոմինիկա
-  Արևելյան Թիմոր
-  Էստոնիա
-  Եթովպիա
-  Ֆինլանդիա
-  Գերմանիա
-  Հունաստան
-  Իսլանդիա
-  Հնդկաստան
-  Իրաք
-  Իռլանդիա
-  Իտալիա
-  Իսրայել
-  Կիրիբատի
-  Լատվիա
-  Լիբիա
-  Լիտվա
-  Մակեդոնիա
-  Մալթա


-  Մավրիկյան կղզիներ
-  Մոլդովիա
-  Չեռնոգորիա
-  Նեպալ
-  Լեհաստան
-  Սամոա
-  Սերբիա
-  Սինգապուր
-  Սլովակիա
-  Սոմալի
-  Տրինիդադ և Տոբագո
-  Թունիս
-  Թուրքիա
-  Հունգարիա
-  Վանուատու


ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

-  Անդորրա
-  Անտիգուա և Բարբուդա
-  Ավստրալիա
-  Բահամյան կղզիներ
-  Բարբադոս
-  Բելգիա
-  Բելիզ
-  Կամբոջա
-  Կանադա
-  Դանիա
-  Գրենադա
-  Յամայկա
-  Ճապոնիա
-  Լեատո
-  Լյուքսենբուրգ
-  Մալազիա
-  Նիդերլանդներ
-  Նոր Զելանդիա

 Նորվեգիա

-  Պապուա Նոր Գվինեա
-  Մեծ Բրիտանիա
-  Մենտ Քիթս և Նևիս
-  Սան Լյուսիա

▪  Մենտ Վիսենտ և Գրենադիններ

▪  Սողոմոնի կղզիներ

▪  Իսպանիա

▪  Շվեդիա

▪  Թայլանդ

▪  Թուվալու


ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪  Բահրեյն

▪  Բուրնա

▪  Հորդանան

▪  Քուվեյթ

▪  Լիխտենշտեյն

▪  Մոնակո

▪  Մարոկկո

-  Տոնգա
-  ԱՄԷ

ԲԱՑԱՐՁԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՈՒՆՆԵՐ

-  Բուրնեյ
-  Օման
-  Քաթար
-  Մաուղյան Արաբիա
-  Սվազիլենդ
-  Վատիկան

2. Հայաստանի Հանրապետությունը երբ է հռչակվել անկախ պետություն

Առաջին հանրապետություն (1918 թվականի մայիսի 28 – 1992թ.) - մայիսյան հերոսամարտերից՝ Մարդարապատից, Բաշ-Ապարանից և Ղարաքիլիսայից հետո:

Երկրորդ հանրապետություն (1920-1991թթ.)

Երրորդ հանրապետություն (1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը: Դրանով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը) - 1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու հարցով:

3. մինչև այսօր քանի ՀՀ Նախագահ է պաշտոնավարել Հայաստանի Հանրապետությունում

ՀՀ-ում պաշտոնավարել է 3 նախագահ.

Լևոն Հակոբի Տեր-Պետրոսյան – 11.11.1991 – 04.02.1998

Ռոբերտ Սեդրակի Քոչարյան - 04.02.1998 – 09.04.2008

Սերժ Ազատի Սարգսյան - 09.04.2008 - 09.04.2018

4. մինչև այսօր քանի ՀՀ վարչապետ է պաշտոնավարել Հայաստանի Հանրապետությունում,

| Առաջին հանրապետության վարչապետերը (1918-1920) | Երկրորդ հանրապետության վարչապետերը (1920-1991) | Երրորդ հանրապետության նախկին վարչապետներ |
|---|--|--|
| 1. Միմոն Վրացյան | 1. Վլադիմիր Մարգարյանց | 1. Կարեն Կարապետյան |
| 2. Համո /Համազասպ/ Օհանջանյան | 2. Ֆադեյ Սարգսյան | 2. Հովիկ Աբրահամյան |
| 3. Ալեքսանդր Խատիսյան | 3. Գրիգոր Արզումանյան | 3. Տիգրան Սարգսյան |
| 4. Հովհաննես Քաջազնունի /Իգիթխանյան/ | 4. Բաղալ Մուրադյան | 4. Սերժ Սարգսյան |
| | 5. Անտոն Քոչինյան | 5. Անդրանիկ Մարգարյան |
| | 6. Սահակ Կարապետյան | 6. Արամ Սարգսյան |
| | 7. Աղասի Սարգսյան | 7. Վազգեն Սարգսյան |
| | 8. Արամ Փիրուզյան | 8. Արմեն Դարբինյան |
| | 9. Աբրահամ Գուլոյան | 9. Ռոբերտ Քոչարյան |
| | 10. Սահակ Տեր-Գաբրիելյան | 10. Արմեն Սարգսյան |
| | 11. Սարգիս Համբարձումյան | 11. Հրանտ Բագրատյան |
| | 12. Սարգիս Լուկաշին /Սրապիոնյան/ | 12. Խոսրով Հարությունյան |
| | 13. Ալեքսանդր Մյասնիկյան | 13. Գագիկ Հարությունյան |
| | | 14. Վազգեն Մանուկյան |

5. Մինչև այսօր ՀՀ Ազգային Ժողովի քանի նախագահ է պաշտոնավարել Հայաստանի Հանրապետությունում,

| Հ/հ | Անվանում | Լիազորությունների ժամկետ | | Քաղաքական կուսակցություն |
|--|----------------------|----------------------------|---------------------------|--------------------------|
| | | Սկիզբ | Ավարտ | |
| 1 | Ավետիք Սահակյան | 1918 թվականի օգոստոսի 1 | 1919 թվականի օգոստոսի 1 | չՅԴ |
| 2 | Ավետիս Ահարոնյան | 1919 թվականի օգոստոսի 1 | 1920 թվականի նոյեմբերի 4 | չՅԴ |
| 3 | Հովհաննես Քաջազնունի | 1920 թվականի նոյեմբերի 4 | 1920 թվականի դեկտեմբերի 2 | չՅԴ |
| Հայաստանի Հանրապետություն (1991) Գերագույն Խորհրդի նախագահներ | | | | |
| 1 | Լևոն Տեր-Պետրոսյան | 1990 թվականի օգոստոսի 4 | 1991 թվականի նոյեմբերի 11 | ՀՀՇ |
| 2 | Բաբկեն Արարքցյան | 1991 թվականի դեկտեմբերի 24 | 1995 թվականի հուլիսի 27 | ՀՀՇ |
| Հայաստանի Ազգային ժողովի նախագահներ | | | | |
| 1 | Բաբկեն Արարքցյան | 27 հուլիսի 1995 | 4 փետրվարի 1998 | ՀՀՇ |
| 2 | Խոսրով Հարությունյան | 4 փետրվարի 1998 | 11 հունիս 1999 | Անկախ |
| 3 | Կարեն Դեմիրճյան | 11 հունիս 1999 | 27 հոկտեմբեր 1999 | Անկախ |
| 4 | Արմեն Խաչատրյան | 2 նոյեմբեր 1999 | 12 հունիս 2003 | Անկախ |
| 5 | Արթուր Բաղդասարյան | 12 հունիս 2003 | 1 հունիս 2006 | ՀՎԿ |
| 6 | Տիգրան Թորոսյան | 1 հունիս 2006 | 26 սեպտեմբեր 2008 | ՀՀԿ |
| 7 | Հրայր Կարապետյան | 26 սեպտեմբեր 2008 | 29 սեպտեմբեր 2008 | ՀՀԿ |
| 8 | Հովիկ Աբրահամյան | 29 սեպտեմբեր 2008 | 21 նոյեմբեր 2011 | ՀՀԿ |
| 9 | Սամվել Նիկոյան | 6 դեկտեմբեր 2011 | 31 մայիս 2012 | ՀՀԿ |
| 10 | Հովիկ Աբրահամյան | 31 մայիս 2012 | 13 ապրիլ 2014 | ՀՀԿ |
| 11 | Գալուստ Սահակյան | 29 ապրիլ 2014 | 18 մայիս 2017 | ՀՀԿ |
| 12 | Արա Բաբլոյան | 18 մայիս 2017 | | ՀՀԿ |

6. Մինչև այսօր քանի ԴԴ սահմանադրական դատարանի նախագահ է պաշտոնավարել Հայաստանի Հանրապետությունում,

Գագիկ Հարությունյան՝ ԴԴ սահմանադրական դատարանի նախագահ.

7. Թվարկել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները,

Դրոշմ

Հայաստանի Հանրապետության պետական դրոշի մասին օրենքն ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսի 24-ին: 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության բարեփոխումներից հետո, 2006 թվականի հունիսի 15-ին ընդունվել է ՀՀ դրոշի մասին նոր օրենքը:

Հայաստանի Հանրապետության դրոշը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է: Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է՝ վերևից ներքև կարմիր, կապույտ, նարնջագույն հորիզոնական հավասար շերտերով: Կարմիր գույնը խորհրդանշում է Հայկական բարձրավանդակը, հայ ժողովրդի մշտական պայքարը հարատևման, քրիստոնեական հավատքի, Հայաստանի անկախության և ազատության համար: Կապույտ գույնը խորհրդանշում է հայ ժողովրդի ապրելու կամքը խաղաղ երկնքի ներքո: Նարնջագույնը խորհրդանշում է հայ ժողովրդի արարչական տաղանդը և աշխատասիրությունը: Դրոշի լայնության և երկարության չափերի հարաբերությունն է 1:2-ի: Սույն մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրոշի լայնության և երկարության հարաբերության չափերի պահպանմամբ կարող է օգտագործվել նաև փոքր կամ մեծ չափի դրոշը:



Ձինանշանը

Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի մասին օրենքն ընդունվել է Գերագույն խորհրդի կողմից 1992 թ. ապրիլի 19-ին: Վերականգնվել է Հայաստանի Առաջին Հանրապետության /1918-1920 թթ./ զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարվեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: 2005թ. նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության բարեփոխումներից հետո, 2006 թվականի հունիսի 15-ին ընդունվել է ՀՀ զինանշանի մասին նոր օրենքը: Հայաստանի Հանրապետության զինանշանը Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշներից է:

Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝ կենտրոնում՝ վահանի վրա պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի թագավորություններից չորսի՝ վերևից ձախ՝ Բագրատունիների, վերևից աջ՝ Արշակունիների, ներքևից ձախ՝ Արտաշեսյանների, ներքևից աջ՝ Ռուբինյանների զինանշանները: Վահանը պահում են արծիվը (ձախից) և առյուծը (աջից), իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն: Հայաստանի Հանրապետության զինանշանի հիմնական գույնն է ոսկեգույնը, պատմական Հայաստանի թագավորություններինը՝ վերևից ձախ՝ կարմիր, վերևից աջ՝ կապույտ, ներքևից ձախ՝ կապույտ, ներքևից աջ՝ կարմիր և

կենտրոնում՝ վահանի վրա պատկերված Արարատ լեռը՝ նարնջագույն: Նշված գույները խորհրդանշում են Հայաստանի Հանրապետության դրոշի գույները:

Օրհներգը՝

Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի 1991 թ. հունիսի 1-ի որոշմամբ, որպես երկրի օրհներգ ընդունվել է Հայաստանի Առաջին Հանրապետության /1918-1920թթ./ օրհներգը:

Տեքստը՝ Միքայել Նալբանդյանի /1829-1866 թթ./

8. *թվարկել 77 նախարարությունները,*

1. Միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն - ՀՀ փոխվարչապետ, նախարար՝ Վաչե Գաբրիելյան
2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - նախարար՝ Արտեմ Ասատրյան
3. Առողջապահության նախարարություն - նախարար՝ Լևոն Ալլոնյան
4. Արդարադատության նախարարություն - նախարար՝ Դավիթ Հարությունյան
5. Արտակարգ իրավիճակների նախարարություն - նախարար՝ Դավիթ Տոնոյան
6. Արտաքին գործերի նախարարություն - նախարար՝ Էդվարդ Նալբանդյան
7. Բնապահպանության նախարարություն - նախարար՝ Արծվիկ Մինասյան
8. Գյուղատնտեսության նախարարություն - նախարար՝ Իգնատի Առաքելյան
9. Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն - նախարար՝ Աշոտ Մանուկյան
10. Կրթության և գիտության նախարարություն - նախարար՝ Լևոն Մկրտչյան
11. Մշակույթի նախարարություն - նախարար՝ Արմեն Ամիրյան
12. Պաշտպանության նախարարություն - նախարար՝ Վիգեն Սարգսյան
13. Մպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն - նախարար՝ Հրայր Թոստումյան
14. Միջուկի նախարարություն - նախարար՝ Հրանուշ Հակոբյան
15. Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն - նախարար՝ Դավիթ Լոքյան
16. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն - նախարար՝ Սուրեն Կարայան

17. Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն - նախարար՝ Վահան Մարտիրոսյան
18. Ֆինանսների նախարարություն - նախարար՝ Վարդան Արամյան

9. Թվարկել տարածքային կառավարման մարմինները

| | <i>Մարզ</i> | <i>Մարզկենտրոն</i> | <i>Կառավարման մարմին</i> |
|-----|-------------------|--------------------|--------------------------|
| 1. | Արագածոտնի մարզ | Աշտարակ | Արագածոտնի մարզպետարան |
| 2. | Արարատի մարզ | Արտաշատ | Արարատի մարզպետարան |
| 3. | Արմավիրի մարզ | Արմավիր | Արմավիրի մարզպետարան |
| 4. | Գեղարքունիքի մարզ | Գավառ | Գեղարքունիքի մարզպետարան |
| 5. | Լոռու մարզ | Վանաձոր | Լոռու մարզպետարան |
| 6. | Կոտայքի մարզ | Չրազդան | Կոտայքի մարզպետարան |
| 7. | Շիրակի մարզ | Գյումրի | Շիրակի մարզպետարան |
| 8. | Սյունիքի մարզ | Կապան | Սյունիքի մարզպետարան |
| 9. | Վայոց ձորի մարզ | Եղեգնաձոր | Վայոց ձորի մարզպետարան |
| 10. | Տավուշի մարզ | Իջևան | Տավուշի մարզպետարան |

10. դասակարգել արդարադատություն իրականացնող մարմիններն՝ ըստ աստիճանակարգության

Դատական իշխանությունը՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում գործում են

1. ընդհանուր իրավասության առաջին ատյանի,
2. վերաքննիչ դատարանները
3. վճռաբեկ դատարանը,
4. օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

5. Սահմանադրական դատարան

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը:

11. տեղական ինքնակառավարման քանի ձև է գործում ՀՀ-ում: Դրանք բաղադրել ըստ թվաքանակի,

Համաձայն ՀՀ Սահմանադրության և ,Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքի (1995թ. դեկտեմբերի 4)՝ Հայաստանը բաժանվեց 10 մարզերի: Մարզերը բաժանվեցին քաղաքային և գյուղական համայնքների, իսկ Երևանը՝ թաղային համայնքների (վարչական շրջանների): Մարզերը միմյանցից տարբերվում են իրենց տարածքների չափերով, բնակչության թվով, համայնքների թվով և տնտեսական զարգացման մակարդակով:

Հայաստանում տեղական ինքնակառավարումը գործում է միայն համայնքների մակարդակով: Այն հանրային կառավարման առանձին օղակ է:

Յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնք բաղկացած է մեկ կամ մի քանի բնակավայրերից:

Հայաստանում կա 1000 բնակավայր, որոնք միավորված են 915 համայնքներում: Դրանցից 49-ը քաղաքային և 866-ը՝ գյուղական:

12. ի՞նչ տարբերություն գոյություն ունի ՀՀ ԱԺ-ի նստաշրջանի և նիստի միջև: Թվարկել նրանց գումարման պարբերականությունը,

Ազգային ժողովն իր լիազորությունները և գործառույթներն իրականացնելիս գործում է նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմինների աշխատանքի միջոցով: (Ազգային ժողովի կանոնակարգե ՀՀ օրենք, հոդված 2):

Հերթական նստաշրջանների գումարման կարգը (Հոդված 35)

Ազգային ժողովի հերթական նստաշրջանները գումարվում են տարեկան երկու անգամ՝ հունվարի երրորդ երկուշաբթիից մինչև հունիսի երրորդ հինգշաբթին և սեպտեմբերի երկրորդ երկուշաբթիից մինչև դեկտեմբերի երրորդ հինգշաբթին:

Հերթական նստաշրջանի ընթացքում գումարվում են Ազգային ժողովի հերթական նիստեր, ինչպես նաև կարող են գումարվել արտահերթ նիստեր:

Հերթական նիստերի գումարման կարգը (Հոդված 36)

Հերթական նստաշրջանի առաջին հերթական նիստերը, որպես կանոն, գումարվում են երկուշաբթիից հինգշաբթի, իսկ մյուս հերթական նիստերը՝ երեք շաբաթը մեկ՝ երեքշաբթիից ուրբաթ:

Հերթական նստաշրջանի վերջին շաբաթվա հերթական նիստերն ավարտվում են հինգշաբթի օրը:

13. ՀՀ կառավարության նիստերն ամսվա ընթացքում ի՞նչ պարբերականությամբ են տեղի ունենում:

«ՀՀ կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր (ՆՀ -174-Ն 18.007.2007թ.)

Կառավարության հերթական նիստերը, որպես կանոն, հրավիրվում են հինգշաբթի օրերին: Անհրաժեշտության դեպքում կառավարության նիստեր կարող են հրավիրվել նաև այլ, այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերի:

Կառավարության հերթական նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: Արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստ կարող է հրավիրել և վարել ՀՀ Նախագահը:

Կառավարության արտահերթ նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ ՀՀ Նախագահի կամ վարչապետի նախաձեռնությամբ կամ կառավարության որոշմամբ:

«2017Թ.ՍԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՈՎԱՐԻՉ»

ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ V ՓՈՒԼԻ

ՀՈԳԵՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Յուրաքանչյուր քայլափոխի մարդկությունը կանգնում է որոշումներ կայացնելու խնդրի առջև: Որոշումներ կայացնում են բոլորը՝ անկախ սեռից, տարիքից, զբաղեցրած պաշտոնից: Որոշումներ կայացնելու պատասխանատվությունը մեծանում է, երբ այն վերաբերում է շրջապատի անձանց կամ կազմակերպության աշխատողներին: Մարդկային ռեսուրսների կառավարիչը նույնպես պետք է ճշգրիտ լինի որոշումներ կայացնելիս: Իսկ ինչ է անհրաժեշտ ճշգրիտ որոշում կայացնելու համար:

Թիրախի կենտրոնում հենց այն է, ինչը պետք է ունենա ամձը՝ ճիշտ որոշումներ ընդունելու համար: Մնացածը՝ ածանցյալ են և բխում են դրանից:

Ինչի՞ մասին է խոսքը:

Տեղադրեք Ձեր կարծիքը թիրախի կենտրոնում: Եթե Ձեր կարծիքը համընկնի հանրապետության լավագույն հոգեբանների կարծիքին, ուրեմն Դուք վաստակել եք 2 միավոր, եթե ոչ՝ զրո միավոր:

Իսկեք ուղիղ նշանակետին և դա կլինի Ձեր միավորը:

Պատասխան -

Որոշում կայացնելու համար ամենաանհրաժեշտ տարրը տեղեկացվածությունն է (ինֆորմացված լինելը):